

Հ Ի Ն Ք Ն Ա Ր

Ի Ծնունդ փրկչին

Աստուծոյ ողորմութեանցն ազդեցումն՝
Առաքումըն միածնին Հօր ի յերկիր :
Համբաւ ահեղ երեւեցաւ յաշխարհի .
Առ ի քէն՝ Երուսաղէմ մեծ քաղաք :
Թաղաւորք եկին առ քեզ ահաւորք
Եւ զօրօք պատեն ըզդրունըս քո՝ Սիովն :
Ասող ունին փայլատակող առաջնորդ ,
Յարեւելից դան ի հարաւ փութապէս :
Արքայի ծընիցելոյ են ի խընդիր
Եւ սիրով նըշան հայցեն բերել ի մէջ :
Ոչ կարես թաքուցանել ո՞վ քաղաք ,
Ձի՛ ' յերկնից է տեսութիւնըն զոր ուսանն :
Փութմ հարց ըզմարգարէն եւ ասէ ,
Ո՛ր ծընանի արքայն Հրէից կուսածին :
Ի բարբառոյ խութագութիցն աւետեաց
Խռովեցաւ Երուսաղէմ եւ Հերովդէս :
Յիրաւի դու խըռովիս , ով Հերովդէս ,
Ձի երկնաւոր արքայն իջեալ բառնաց զթագդ :
Որոյ իւր են յաւիտեանքն ըստ Յակովբայ՝
Նա կանգնէ զաթոռ Դաւթի յաւիտեան :
Իսկ դու ընդէր ես խռովեալ , Երուսաղէմ .
Հակառակ քո փրկութեանըդ վարանիս :
Ձի յազգէ արբահամեան է շառաւիղն .
Եւ յարմատոյն Յեսսեայ ծաղկեալ է գաւազանն :
Երանեն , քեզ երանեն քեզ երանեն
Ամենայն ազգ եւ ազինք քեզ երանեն :
Դու խընդա՛ եւ զուարճացիր Երուսաղէմ ,
Ուրախացիր բերկրեալ ցընծա մայրաքաղաք .
Ձայն աւետեաց հընչեաց յերկնից առ ձեզ մարդիկ
Ելէք տեսէք ի Բեթղահէմ զըսթանչելիս :
Հրեշտակաց իմն է բարբառս այս սոսկալի ,
Եւ զօրաց երկնաւորացըն շուրջ զայրին :
Օրհնութիւն Հօր ի բարձունս երգեն զուարթունք
Եւ յերկիր խաղաղութիւն որդւոց մարդկան :
Ընդ նոսին համաձայնեալ ուրախութեամբ ,
Երգեմք եւ մեք տեսուն Աստուծոյ փառք ի բարձունս :